ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԿՈՒԱՊԱՇՏ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Այս առիթով կարդում ենք «Բարի-լուրի» մէջ։

Չինական քաղաքական թերթերը ներկայումս յորդորում են ժողովրդին, որ թողնեն կռապաշտութիւնը։ Եւ տեղերում կռատուները ամայի ու աւերակ են դառել և ուրիշ տեղերում կուռքերին դուրս են բերել տաճարներից և դարսել տաճարին կից մի փոքրիկ սենեակում, իսկ տաճարը դարձրել են ուսումնարան։

Արդեօք Տիբեթը պիտի բացվի՞։ Տիբեթի սահմանների մօտ միշտ աւելի առաջ է գնում միսիոնարական գործը, բայց առանց աղմուկի, այնպէս որ քրիստոնեաները դեռևս չեն լսել այնտեղ եղած մեծ առաջադիմութեան մասին։ Հնդկաստանի և Չինաստանի կողմից Տիբեթը ներկայումս շրջապատված է միսիոնարական կայարանների մի ամբողջ շղթայով։ — Թէ ինչպէս միշտ աւելի չքանում է բուդդայականութեան իշխանութիւնը Տիբեթում, դրա ապացոյց էր այն վերաբերմունքը, որ չինական կառավարութիւնը ունեցաւ դէպի համայն բուդդայականութեան պետը՝ «Մուրբ Լամանը»։ Նա որ մինչև այժմ ապրում էր Տիբեթի վանական քաղաք Լհասսայում առանձնութեան մէջ և պարծենում էր իբրև մեծ իշխանաւոր, ստիպված էր խոնարհել և մի նուաստացուցիչ ուղեւորութիւն անել դէպի Պէկին, որտեղից նա բոլորովին ձեռ քաշելով ամեն քաղաքական և քաղաքացիական իշխանութիւնից դեկտեմբերի 21-ին վերադարձաւ։

Միսիոնարական գործ Սումատրա կղզում։ 75 տարի սրանից առաջ, 1834-ին սպանեցին և կերան վայրենի բատակները առաջին երկու ամերիկացի միսիոնարներին — Մունսոնին և Լիմանին։ Նորերս գտան նրանց սպանվելու տեղը — Լօբու Պինինգի մօտ — և կանգնեցրին այնտեղ մի արձանաքար, որի վրայ քանդակուած են հետևեալ խօսքերը. «Այստեղ հանգչում են երկու ամերիկացի միսիոնարների Մունսոնի և Լիմանի ոսկորները, որոնց 1834-ին

սպանեցին և կերան (Յօհ. ԺԶ, 1–3)». Ներքևն էլ գրված է. «Նահատակների արիւնը եկեղեցու սերմն է»։ Այդ նահատակներից մէկի մօր մասին պատմում են, թէ երբ նա լսեց իր որդու մահը, այնչափ չը ցաւեց իր որդուն կորցնելու համար, որչափ նրա համար, որ ինքը չունէր ուրիշ որդի որ գնար և սպանվածի տեղը բռնէր։ Այնուհետև նա ամեն օր աղօթում էր մարդասպան բատակների համար և վերջապէս նրա աղօթքը լսուեց։ Հիմա այն Լօբու Պինինգ գիւղում քարոզւում է աւետարանը և մարդասպանների որդիներից շատերը բերված են արդէն Յիսուսի մօտ։ Փրկութիւն փնտռողների մէջ է նոյնպէս ցեղապետ Օմպու Տօմբակը, նա այն երկու միսիոնարներին սպանողների գլխաւորի որդին է, 80 տարեկան ծերունի։ Հռենոսի Միսիոնարական ընկերութիւնը ունի այժմ այն կողմում 69 գործիչներ, 43 գլխաւոր և 375 երկրորդական կայարաններում և 82 հազար տեղացի քրիստոնեաներ։ Ի՞նչպիսի փոփոխութիւն կարող է Աստուծոյ Հոգին առաջ բերել մարդկանց սրտերում։